

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. *Ս, գ, ք, պ, փ* տառերը միևնույն ձևով հերթով միացան *ուրիշ*-ի «ընկերոջն» ու նոր բառեր դարձան: Տառերն ինչպե՞ս միացան:

Ս. սկզբից *Բ.* վերջից *Գ.* նախավերջից *Դ.* մեջտեղից *Ե.* կեսից

2. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

ապրելու տեղ = () = *նտանավորի մաս*

Ս. ավան *Բ.* շենք *Գ.* տուն *Դ.* սենյակ *Ե.* բնակարան

3. Մեղվիկի փոխարեն պատասխանի ո՞ր տարբերակը կդառնա բերված նկարելուկի ձախակողմյան բառի վերջը և աջակողմյան բառի սկիզբը:

ԱՊԱՇ () *ՈՐԴ*

Ս. վագ *Բ.* ավան *Գ.* քան *Դ.* վար *Ե.* ավել

4. Պատասխանի տառագույգերից մեկի տառերն ընկերացան *ամսյ*-ի հետ. մի տառի հետ *ամսյ*-ը դարձավ լույսի աղբյուր, մյուսի հետ՝ լեռան գլխին նստած ձյուն: Պատասխանի ո՞ր տարբերակում են այդ տառերը:

Ս. ւ, տ *Բ.* գ, լ *Գ.* ւ, գ *Դ.* շ, չ *Ե.* գ, ճ

5. *Ի* հնչյունը ներկա է եղել պատասխանի տարբերակներից չորսում, իսկ մեկում այդպես էլ տեղ չգտավ: Ո՞ր բառն էր «անհյուրընկալ»:

Ս. քննաշրջան *Բ.* միջնորմ *Գ.* ծննդյան *Դ.* չվացուցակ *Ե.* պատվախնդիր

6. Մեղվիկը մի հետաքրքիր պատմության մեջ օգտագործեց կնճռոտ հարցի, մի հազվագյուտ բանի, խաբուսիկ լացի և ապարդյուն աշխատանքի մասին մտքեր՝ խոսքը համեմելով պատկերավոր արտահայտություններով: Պատասխանի տարբերակներից ո՞րը տեղ չգտավ մեղվիկի խոսքում:

Ս. սիզիփոսյան աշխատանք

Բ. ավգյան ախոռ

Գ. կոկորդիլոսի արցունքներ

Դ. գորդյան հանգույց


Ե. ծիծեռնակի կաթ

7. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

կամար - արդուկ

անմարդաբնակ - ականանետ

ներմուծել - ելումուտ

հարավ - 

Ա. ավար Բ. վարար Գ. արարել Դ. հարել Ե. արվեստ

8. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



Ա.

Կատուն քնում է գորգի վրա:

Բ. Կատուն նստած է գորգին:

Գ. Կատուն պառկած է գորգին:

Դ. Կատուն թռչող գորգ ունի:

Ե. Կատուն է գգել գորգի թելերը:

9. *Բեկել, փակել, դակել, պոկել, նիկել* բառաշարքի բառերից չորսը ենթարկվում են նույն օրինաչափությանը: Ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. բեկել Բ. փակել Գ. դակել Դ. պոկել Ե. նիկել

10. Անին *լումա, լեզու, ծառա, հյուր, նյութ, գրամ, ուզել, առած, ամուլ, թույն, մարգ* բառերից տասով միննույն օրինաչափությամբ հինգ բառագույգ կազմեց: Ո՞ր բառով բառագույգ չկազմվեց:

Ա. նյութ Բ. հյուր Գ. ուզել Դ. ծառա Ե. լումա

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. *Տանուտերի տված ճաշին ականատես եղան շատ մարդիկ, մասնակցեցին քչերը:*

Նախադասության մեջ հնարամտորեն թաքնվել է մասնակիցներից մեկը: Պատասխանի տարբերակներից ո՞րն է այդ մասնակցի «ընկերը»:

Ա. բժիշկ Բ. գզիր Գ. գյուղատնտես Դ. ռանչպար Ե. դարբին

12. Ո՞ր թռչունն է, հետ-հետ քայլելով, որոշակի օրինաչափությամբ թաքնվել *վարունգ, ամառ, իլիկ, փախուստ, կարաս, ճամփա* բառաշարքում:

Ա. սարյակ Բ. արագիլ Գ. փասիան Դ. ջայլամ Ե. աղավնի

13. *Քամին գլուխը խփում է քարին,
Անպի փեշերն է քրքրում քամին,
Քամին խաղում է ինքն իր պոչի հետ,
Ծառերի գլխին դառնում է աղետ,
Փորձանք է դառնում անտառի գլխին:*

Պատասխանի տարբերակներից ո՞րն իր «ընկերը» չունի բերված հասվածում:

Ա. քղանցք Բ. պատուհաս Գ. փորփրել Դ. ազի Ե. մրիկ

14. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա. Ծառասունկը դանդաղ է աճում:
Բ. Ծառի տակ սունկ է աճում:
Գ. Ծառան սունկ է աճեցնում:
Դ. Ծառն ու սունկը աճում են անտառում:
Ե. Ծառան սնկով ապուր եփեց:




15. Ո՞ր ձայնավորով և *ՄԲԸ* տառերով է հնարավոր կազմել յոթատանի մի բառ՝ առանց տառերի տեղերը փոխելու:

Ա. ա Բ. ու Գ. ի Դ. ո Ե. ե

16. Բառերի ո՞ր եռյակը քառակուսու մեջ լրացնելիս քառակուսու տողերով և սյուններով վերևից ներքև, ձախից աջ, կկարդանք բառեր:

Ա. պաղ, արև, ցող
Բ. փող, սպա, ոսպ
Գ. պատ, արկ, տակ
Դ. կար, ուրց, կկու
Ե. կոպ, սար, սեր



17. *Թուխ, ծառա, նուշ, համ, կավիճ* բառերից չորսը որոշակի օրինաչափությամբ կապված են իրար: Ո՞ր բառը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. թուխ Բ. ծառա Գ. նուշ Դ. համ Ե. կավիճ

18. Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Պատասխանի տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:

ԳԱՅԼ
+
ԳԱՅԼ
+
ԳԱՅԼ
ՈՂՄԱԿ

	3654	8643	5736	5436	9216
	+	+	+	+	+
Ա.	3654	Բ. 8643	Գ. 5736	Դ. 5436	Ե. 9216
	+	+	+	+	+
	<u>3654</u>	<u>8643</u>	<u>5736</u>	<u>5436</u>	<u>9216</u>
	10962	25929	16208	16308	27648

19. Պատասխանի տարբերակներից որի՞ «ընկերն» է գաղտնագրվել նկարելուկում:



Ա. բարեկամ **Բ.** խաչապաշտ **Գ.** շիլաշփոթ **Դ.** գորովագին **Ե.** խաժակն

20. Զինվորներ Արամը, Գարիկը, Դավիթը, Խաչատուրը, Կարենը և Մելքոնը կատարեցին բոլոր տարբեր հրամանները, որ սպան ուղիղ թաքցրել էր այս նախադասության մեջ: Քանի՞ զինվոր մնաց անշարժ:

Ա. մեկ **Բ.** երկու **Գ.** երեք **Դ.** չորս **Ե.** հինգ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. *Մպիտակ ձին սլանում էր այրվող այգեստաններ հիշեցնող վայրերով և ի վերջո հանգստանում Այու սարի լանջին: Իսկ ձիապանը բարձրից դիտում էր քարափը, հիշում իր մանկություն ու պատանեկություն փուլերի անմոռաց պահերը, Արգաքանդի խնձորները, Որոտանի եզերքին անցկացրած շրջանը, որ կոչվում է երիտասարդություն: Օրը մթնեց, և նա դանդաղ վերադարձավ տուն: Իջավ գիշեր և հուշեր արթնացրեց նրա հոգում:*

Հայ դասական գրողների ամենաշատը քանի՞ գրական ստեղծագործությունների վերնագրեր կան բերված հատվածում:

Ա. 12 **Բ.** 11 **Գ.** 8 **Դ.** 7 **Ե.** 4

22. Միերը պատասխանի ո՞ր տարբերակի տառերը նույն սկզբունքով ավելացրեց *վագ, պար, ման, վեր, կան* տառախմբերից յուրաքանչյուրին և ստացավ նոր բառեր:

Ա. տ, ն Բ. ա, ն Գ. ի, չ Դ. ս, լ Ե. ք, շ

23. *Հին եմ, մեծ եմ, ծեր եմ, սառն եմ, փոքր եմ, նոր եմ, գոհ եմ, տաք եմ* արտահայտություններից ո՞ր մեկն է առանձնանում իր «երկերեսանիությամբ»:


Ա. գոհ եմ Բ. փոքր եմ Գ. ծեր եմ Դ. մեծ եմ Ե. նոր եմ

24. Պատասխանի ո՞ր տարբերակում է բերված խառնագիր-դարձվածքի իմաստն արտահայտող բառը:

Իս իր տկ գա եր յլ ած

Ա. անկուշտ Բ. շինծու Գ. խարդախ Դ. խելացի Ե. խիզախ

25. Տառաշարը գրված է որոշակի օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներից ո՞րն է թաքցրել մեղվիկը:

տ, ք, ե, ք, հ, վ, , ու, ի

Ա. ք Բ. տ Գ. յ Դ. ե Ե. ի

26. Մեսրոպը, օգտագործելով հայոց այբուբենի որոշ տառանուններ, կազմեց նախադասություն, այնուհետև որոշակի հնարքով գաղտնագրեց այդ նախադասությունն ու ստացավ բերված տառաշարը: Պատասխանի տարբերակներից ո՞րն է գաղտնագրել Մեսրոպը:

Ծ Ռ Դ Ռ Ծ Ռ Յ Ը Ն Ն Ռ Ռ Հ Ն Ն Շ Ռ

Ա. Ծառան դռնեղուռ ընկած ցորեն էր հավաքում:

Բ. Ծառա դառած՝ առա ցորեն ու նուռ, առա հոն ու նուշ առա:

Գ. Ծառաները դուռ ու լուսամուտ փակեցին, հեռու մնացին աղմուկից:

Դ. Ծառա դառնալ մտքով նույնն է՝ ծառա դառնալ իրապես:

Ե. Ծառա չեն դառնում, եթե ցորեն ու նուռ են առնում:

27. Ի՞նչ բառ է գաղտնագրվել երկրորդ պատկերում: Լուծման բանալին առաջին պատկերում է:

	ար	շար	փոխան	
սար	Դ	Ե	Ա	ծար
երես	Բ	Ի	Վ	սան
խավ	Ն	Տ	Ս	շվոթ
կալ	բար	դեղ		

վարսակալ	պղպեղ	մութ
որմնադիր	պատգամավոր	պատգամավոր
ներկարար	պղպեղ	պղպեղ

Ա. ակնադիտակ Բ. դաստիարակ Գ. դաստակերտ
 Դ. պարկապզուկ Ե. կերպարանք

28. Լուսինեն խառնագրեր էր կազմում իր սիրած հեղինակների անուններից ու նրանց ստեղծագործությունների անվանումներից: Պատասխանի տարբերակների հեղինակներից որի՞ ստեղծագործությունն է գաղտնագրել Լուսինեն «ՌԻՄՄԱՆ» խառնագրով:

Ա. Մայնթնաու Բ. Հսկիանայա Գ. Դվիրաշնագե Դ. Ճեյդիրման Ե. Թամնսայա

29. *Արևանը, բարձրացնելով գլուխը, դիմեց երիտասարդ զբոսավարներին.
 - Էականը ընկերավարի, թեթևությամբ ժպտացեք: Ինտրիգներից, լուրջ խնդիրներից ծիծաղը կփրկի: Հիշեք՝ ձեր դեկավարած ճամփորդությունների մարզական յուրահաստկությունները նկարագրեք շքեղությամբ, որակով: Չծուլանաք պարզապես, ջանացեք: Ռադիոկապով սովորեք վերահսկել տեղանքը, թույլեական ցուցումներ ուղարկել փրկարարներին, քարտեզագրել և... օդապարիկով ֆոռալ: Հաջողություն:*

Պատասխանի տարբերակներից ո՞րը չի ենթարկվում ամբողջ տեքստի ընդհանուր օրինաչափությանը:

Ա. երիտասարդ Բ. հաջողություն Գ. ցուցումներ Դ. մարզական Ե. վերահսկել

30. ՌՊԺԱ, ՌՊԺԵ, ՌՊԿԸ, ՌՊԻԴ, ՌՊՀԴ շարքի տառախմբերից չորսը դասավորված են որոշակի օրինաչափությամբ: Ո՞ր տառախումբն է խախտել այդ օրինաչափությունը:

Ա. ՌՊԺԱ Բ. ՌՊԺԵ Գ. ՌՊԿԸ Դ. ՌՊԻԴ Ե. ՌՊՀԴ